<<ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Զինղեկների կողմից գործընկերների հետ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:

Հեղինակ՝ Երևանի հ. 107 միջն. դպրոցի ռազմագիտության ուսուցչիչ՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Առարկա՝ ՆԶՊ և ԱԿ

Ղեկավար՝ Փոխգնդապետ Ա. Իսահակյան

Երևան 2023թ.

Բովանդակություն

Ներածություն----------3

ԳԼՈՒԽ 1 Զինղեկների կողմից գործընկերների հետ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով -- 5

1.1 Զինղեկների կողմից գործընկերների հետ փորձի փոխանակումը----------5

1.2 Զինղեկի մասնագիտական գործունեության բարձրացում----------7

1.3 Պաշտոնային պարտականությունները----------7

1.4 Հանրակրթական ուսումնական հաստատության զինղեկի գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները----------

Եզրակացություններ և առաջարկություններ ----------20

Օգտագործված գրականություն----------21

Ներածություն

Թեմայի արդիականությունը.

Ներածության բաժնում նպատակահարմար եմ համարել խոսել թեմայի արդիականության, կարևորության, աշխատանքի նպատակների և կառուցվածքի մասին: Հմուտ ուսուցիչն այսօր տիրապետելով մասնագիտական և ոչ մասնագիտական գիտելիքներին, կկարողանա յուրաքանչյուր տարիքային շրջափուլում ուսումնադաստիարակչական աշխատանքներն այնպես կազմակերպել, որ մաքսիմալ ապահովի երեխայի ՝ որպես աշակերտակենտրոն ուսուցման օբյեկտի համակողմանի և ներդաշնակ զարգացումը: Բացի դա ժամանակակից ուսուցիչ-զինղեկը պետք է ունենա համապատասխան գիտելիքներ յուրաքանչյուր երեխային անհատական մոտեցում ցուցաբերելու և անհատական վստահության հիման վրա շփում ստեղծելու համար: Ուսուցիչը պետք է ստեղծագործաբար մոտենա իր աշխատանքին՝ անընդհատ կատարելագործելով, ինքնադաստիարակվելով և ինքնակրթվելով:

Աշխատանքի նպատակը.

•Ռազմական հայրենասիրական աշխատանքի համակարգի կատարելագործում,
•մասնագիտական հմտությունների կատարելագործում,
•մանկավարժական փորձի ընդհանրացում և տարածում, աշակերտների պաշտպանման և պահպանմնան հարցում
•զորամասի հետ կապի ամրապնդում
•Համագործակցություն տարածքային զինկոմիսարիատ իհետ.
•Համայնքի՝ քաղաքացիական պաշտոնական և արտակարգ իրավիճակների վարչության հետ համատեղ աշխատանք
•Զինղեկի վերապատրաստման կազմակերպում քաղաքացիական պաշտպանության դասընթացներում
•ուսումնական հաստատության մոբիլիզացիոն աջակցության վերաբերյալ մեթոդական օգնության պատրաստում և համագործակցություն քաղաքապետարանի հետ •համագործակցություն ճանապարհային ոստիկանության և այլ շահագրգիռ ծառայությունների հետ

Այս նպատակներին հասնելու համար զինղեկների հանդիպումներում, սեմինարներում, ուսումնականմեթոդական հավաքներին ուսումնասիրվում և քննարկվում են նորմատիվ և Հայաստանի Հանրապետության իրավական ակտերը, որոնք վերբերում են հայրենիքի պաշտպանության, զինվորական ծառայության, և դպրոցներում աշակերտների նախնական զինվորական պատրաստման մեթոդներին: Վերլուծվում են օրենսդրության փոփոխությունները, անվտանգության խնդիրները ուսումնական տարածքում, փաստաթղթերի պահպանման կարգը, կյանքի անվտանգության դասընթաց անվտանգության ապահովման և զինվորական ծառայության նախապատրաստման գործի նշանակությունը, դիտարկվում են կանխարգելման ոլորտում կրթության ձևերն ու մեթոդները և արտակարգ իրավիճակներից պաշտպանություն, ուսուցման մեթոդական կատարելագործում առարկան և մոբիլիզացիոն պատրաստվածության բարելավումը: Ստեղծվել է ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգ ուսումնական գործընթացի ընթացքում և դպրոցական ժամերից դուրս: Տարածաշրջանային զանգվածային ռազմական վիճակի նախապատրաստման և անցկացման համար ակտիվ խաղեր, մրցումներ և ուսումնամարզական հավաքներ զինվորական ծառայության հիմունքների վերաբերյալ, դպրոցում մշտապես անցկացվում են:

Աշխատանքի խնդիրներն են.

<u>Մանկավարժական ճիշտ մոտեցումը.</u> որը նպաստում է կրթական ու դաստիարակչական հաստատությունների մշակույթի ձևավորմանը՝ հիմնված վստահության, պատասխանատվության, արդարության և այլ սկզբունքների վրա:

<u>Ժամանակակից ուսուցչիչ-զինղեկի էթիկայի անձնային, որակական և մասնագիտական հիմնադրույթները</u>. որը մեր երկրում սահմանվում են՝ ելնելով Մարդու և երեխայի իրավունքների համընդհանուր հռչակագրերի, ՀՀ Սահմանադրության, Երեխայի իրավունքների մասին, Կրթության մասին և Հանրակրթության մասին ՀՀ օրենքների,

ՀՀ կառավարության՝ ուսուցչի մասնագիտական գործունեությանն առնչվող որոշումների, Կրթության և գիտության նախարարի հրամանների, նորմատիվ այլ փաստաթղթերի, միջազգային իրավունքի, բարոյականության համամարդկային դրույթների, ինչպես նաև հայկական դպրոցի դարավոր ավանդույթների ոգուց:

Գլուխ 1. **Զինղեկների կողմից գործընկերների հետ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:**

1.1 Զինղեկների կողմից գործընկերների հետ փորձի փոխանակումը

Հայաստանի Հանրապետության շուրջ ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունը ձևավորվում է ստրատեգիական և աշխարհաքաղաքական բարդ միջավայրում, որն աչքի է ընկնում մի շարք անկանխատեսելի գործոնների ազդեցությամբ: Հաշվի առնելով տարածաշրջանի ռազմական անկայուն վիճակը՝ այսօր, առավել քան երբևէ, անհրաժեշտ է դպրոցներում ունենալ հմուտ և կայուն գիտելիքներով զինղեկ-ուսուցիչներ, որոնք կկրթեն և, դրանով իսկ, կնպաստեն բանիմաց սերունդ ունենալուն: ՀՀ-ի համար աշակերտների և երիտասարդների շրջանում ռազմահայրենասիրական դաստիարակությունը կարևորագույն հիմնախնդիրներից մեկն է: Այն սերտորեն կապված է նախնական զինվորական պատրաստվածության հետ և պետք է նպաստի պատանիների մոտ ռազմական գործի ավելի լավ յուրացմանը և տիրապետմանը 1 : Каменев А.И. История подготовки офицерских кадров в СССР. ВПА. -М., 1991.- 261 с.

Զինղեկի համար գործընկերների հետ համագործակցությունը խիստ կարևոր նշանակություն ունի: Օրինակելի փորձը, որը սկսնակ զինղեկը կարող է վերցնել ավագ ու փորձառու գործընկերներից, մեծապես նպաստում է, որպեսզի զինղեկն արդեն գործնականում պատկերացում կազմի այս կամ այն խնդրի վերաբերյալ: Այն զինղեկները, ովքեր ավելի փորձառու են, տեղեկացված են հավանականությունն ավելի մեծ է, որ վերջիններս կարող են կառուցել արդյունավետ անհատական դասեր և ապահովել շարունակական ուսուցում: Նրանք ի վիճակի են կազմել և ընտրել դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցառումներ, որոնց միջոցով համապատասխանաբար զարգացվում են աշակերտների ըմբռնումը և հմտությունները: Ստացվում է, որ օրինակելի փորձի փոխանակումը կարող է մոտիվացնել սկսնակ, ոչ հմուտ զինղեկներին ամեն կերպ գտնել ճանապարհներ նոր հմտություններ ու կարողությունների ձեռքբերման համար: Այստեղ իրականացված բազմաբովանդակ գործառույթները օգնում են ուսուցչին համակարգել իր ողջ մարդկային ներուժը, աշխատանքին մոտենալ ստեղծագործաբար, գնալ նոր ու

հետաքրքիր գաղափարների որոնման ճանապարհով, ինչի արդյունքում աշխատանքը դառնում է համակարգված ու արդյունավետ:

Ուսումնական գործընթացը համակարգվում է, քանի որ մի նպատակի իրագործման համար աշխատում է մանկավարժների ամբողջ մի թիմ, բացառվում է ցանկացած անհատական շահ, բոլորը գործում են՝ նպատակ ունենալով համակարգել ուսումնադաստիարակչական գործընթացն ու բարձրացնել կրթության առաջնային շահակիցների՝ սովորողների կրթության որակը բարելավելու նպատակով: Կրթության որակ հասկացությունը սերտորեն առնչվում է կրթության մատչելիությանը և, չնայած սրանք երկու տարբեր հասկացություններ են, այնուամենայնիվ փոխլրացնում են միմյանց: Եթե կրթության որակը հնարավոր չէ առանց կրթության մատչելիության, ապա մատչելիությունը իմաստազրկվում է առանց համապատասխան կրթական որակի ապահովման: Որակյալ կրթությունը միտված է ապագային և ենթադրում է ոչ միայն նախկինում առկա գիտելիքների ուսուցանում և յուրացում, այլև նոր գիտելիքների ստեղծում անհատապես կամ կոլեկտիվ եղանակով:

Գիտելիքաստեղծ գործունեությունը որակյալ կրթության հիմքերից է, որը կարող է բերել գիտելիքահեն տնտեսության, ժողովրդավարական հասարակարգի զարգացման, կյանքի զարգացման: Զինղեկը համագործակցում է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով և մասնակցում է դպրոցի մեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին: Զինղեկը մասնակցում է նաև ուսումնական պլանով նախատեսված առարկաներից մեթոդմիավորումների կողմից կազմել և տնօրենի հաստատմանն են ներկայացվել անհատական առարկայական պլանները, լրացուցիչ դասընթացների ժամանակացույցը, ըստ որի՝ սովորողի համար կազմակերպվել է ուսուցում՝ բաց թողած ծրագրային նյութը յուրացնելու համար:

Մեթոդմիավորումների հանդիպումներ, սեմինարներ, ցուցադրական դասեր: Հմտությունները բարելավելու նպատակով անվտանգության և փորձի փոխանակում անցկացնել տարեկան 2 անգամ, ցուցադրական «Անվտանգության դաս» և պարապմունքներ, որոնց իրականցման ընթացքում զինղեկը, աշակերտներն և դպրոցի անձնակազմը հմտանում են արտակարգ իրավիճակներում առանց խուճապի գործողությունների կատարմանը: Զինղեկի մասնակցությունը մեթոդմիավորումների աշխատանքներին ապահովում է զինղեկների և աշակերտների մոտ տեսական

գիտելիքներ և արտակարգ իրավիճակներում գործողությունների գործնական հմտություններ:

Զինղեկը ՔՊ պլանի շրջանակներում իրականացնում է տարհանում և դրանց մեթոդիկայի քննարկում, վարժանքների կազմակերպում ուսուցիչների և աշակերտների հետ: Զինղեկներին մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով դպրոցականների և անձնակազմի ուսուցման ձևերնում մեթոդները համակարգված կերպով վերահսկում է մ/մ նախագահը:

«Նախանական զինվորական պատրաստություն» առարկայական ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպման շրջանակներում զինղեկը ապահովում է «Նախանական զինվորական պատրաստություն» առարկայական ծրագրով և ուսումնական նյութատեխնիկական բազայով նախատեսված տեսական և գործնական ուսուցում անցկացնելու համար՝ անհրաժեշտ տարրերով: Զինղեկը ցույց է տալիս ղեկավարին մանկավարժական աջակցության իրականացման միջառարկայական կապերը, ղեկավարում է «Նախանական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցումը, արդյունքները քննարկում մանկավարժական խորհրդի նիստում:

Զինղեկը ղեկավարում և վերահսկում է սովորողների ֆիզիկական պատրաստության վիճակը, մեթոդական օգնություն է ցույց տալիս ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներին ուժային վարժությունների անցկացման հարցերում: Վերահսկողություն է սահմանում համաձայն զինղեկների և մանկավարժների ընտրության մրցութային սահմանված կարգի՝ հիմնական, ավագ, միջնակարգ ուսումնական հաստատություններում պարտադիր հիմունքներով զինվորական ղեկավարների ընտրության և նշանակման ընթացակարգի վրա:

1.2 Զինղեկի մասնագիտական գործունեության բարձրացում

Յուրաքանչյուր մասնագիտական գործունեություն ենթադրում է որոշակի պահանջներ: Դրանք են՝ մասնագիտական բարձր վարպետությունը, գիտելիքների ու հմտությունների գործածման կարողությունը և այլն: Ուսուցիչները իրար են կապում տարբեր ժամանակաշրջաններ ու սերունդների, փոխանցում և տարածում են համամարդկային մշակութային արժեքները, ձևավորում են ապագայի սերունդը: Մի հին ու իմաստուն ասացվածք կա. «Ուսուցիչն է ստեղծում ազգը»: Այս իմաստությունը այժմեական է նաև մեր օրերում: Այն իր մեջ խտացնում է ուսուցչի աշխատանքի սոցիալական ու մարդասիրական ողջ իմաստը: Ժառանգելով «բոլոր ժամանակների ու ժողովուրդների» առաջավոր մանկավարժների աշխատանքի սկզբունքը՝ ուսուցչությունը ներկայանում է որպես ժամանակակից հասարակության ստեղծագործ ուժ:

Դիտարկելով ժամանակակից զինղեկին, որպես ուսումնական գործընթացում գործունեության սուբյեկտ, առանձնացնենք նաև մասնագիտականմանկավարժական որակներ, որոնք կարող են մոտ լինել ընդունակություններին և զուտ անձնային որակներին: Դրանց են դասվում՝ մանկավարժական էրուդիցիա, մանկավարժական նպատակադրում, մանկավարժական մտածողություն, մանկավարժական հնարամտությունը, մանկավարժական կանխատեսումը, մանկավարժական ռեֆլեքսիան: Ընդգծելով զինղեկի մասնագիտական դերի կարևորությունը՝ դիտարկենք նրա ֆունկցիաները, ընդունակությունները, կարողությունները, վերլուծվում նրան ներկայացվող պահանջները և հասարակության կողմից նրան ներկայացված սոցիալական սպասելիքները: Մասնագիտական բարձր որակավորմամբ գործունեության իրացման համար զինղեկը պետք է օժտված լինի գիտելիքների և հմտությունների համագումարով, ունենա համապատասխան ընդունակություններ և մասնագիտական կարևոր որակներ:

Ուսուցչի մասնագիտությունը առաջադրում է մի շարք հատուկ պահանջներ, որոնց շարքում հիմնականը մասնագիտական կոմպետենտությունն է և դիդակտիկ մշակույթը: Նշենք, որ զինղեկի մանկավարժական ընդունակությունները իրենց բովանդակության մեջ ներառում են շատ անձնային որակներ, բացահայտվում են որոշակի գործողությունների, հմտությունների միջոցով:

Առանձնացնենք նաև ժամանակակից զինղեկի մասնագիտական ակադեմիական ընդունակություններ /երբ նա գիտի ավելին, քան ուղղակի ուսումնական ծրագիրը, հետևում է գիտության բացահայտումներին և ազատ տիրապետում է նյութին, որի հանդեպ դրսևորում է հետաքրքրություն/: Ուշադրության են արժանի նաև ուսուցչի պերցեպտիվ ընդունակությունները /աշակերտի ներաշխարհը թափանցելու կարողություն, հոգեբանական դիտողականություն/, խոսքային ընդունակությունները /սեփական մտքերը և հույզերը խոսքի, դիմախաղի և մնջախաղի միջոցով պարզ և հստակ արտահայտելու ընդունակություն/, կազմակերպչական ընդունակությունները /աշակերտական կոլեկտիվը կազմակերպելու, համախմբելու, համատեղ աշխատանքը խթանելու, և սեփական աշխատանքը կազմակերպելու ընդունակությունները/: Զինղեկի մասնագիտական որակների շարքին են դասվում նաև ավտորիտար ունակությունները: Սրա տակ նշենք աշակերտների վրա անմիջական հուզակամային ձևով ազդելու և դրա միջոցով հեղինակություն վայելելու ընդունակությունները:

1.3 Պաշտոնային պարտականությունները

1) պլանավորում և իրականացնում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ հանրակրթության պետական և «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆԶՊ) առարկայի չափորոշչին և ծրագրերին համապատասխան և ղեկավարում է ռազմական գործն ուսումնասիրող խմբակների աշխատանքը.

2) ուսումնական հաստատության ղեկավարության և մանկավարժական կոլեկտիվի հետ համատեղ իրականացնում է սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը, պլանավորում և իրականացնում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ հանրակրթության պետական և ՆԶՊ առարկայի չափորոշչին և ծրագրերին համապատասխան.

3) հաշվառում և պահպանում է ուսումնական զենքը, փոքր տրամաչափի հրացանները, դրանց փամփուշտները՝ համաձայն «Զենքի մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների.

4) ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի հետ միասին կազմակերպում է բազմամարտի և քաղպաշտպանության նորմատիվների ցուցանիշների հանձնումը.

5) սովորողներին մասնակից է դարձնում հրաձգության, ռազմակիրառական մարզաձևերի ու քաղաքաշտպանության համայնքային, մարզային, հանրապետական մրցումներին, սպարտակիադաներին և այլ միջոցառումների.

6) ապահովում է շեֆություն ստանձնած զորամասերի, այլ ձեռնարկությունների, կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ ՆԶՊ դասավանդման որակը բարելավելու նպատակով.

7) աջակցում է զինկոմիսարիատին՝ պատանիներին զինվորական ուսումնական հաստատություններ ընդունվելը նախապատրաստելու համար, օգնում դասղեկներին նախապատրաստելու նախազորակոչային տարիքի պատանիների փաստաթղթերը և ապահովում նախազորակոչային հաշվառումը, նրանց կցագրումը զինկոմիսարիատին.

8) համագործակցում է ուսումնական հաստատության մյուս մանկավարժների, հոգեբանի, սովորողների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում.

9) համագործակցում է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով.

10) մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին.

11) սահմանված կարգով ստանում է զինվորական համազգեստ և այն կրում աշխատանքի ընթացքում:

1.4 Հանրակրթական ուսումնական հաստատության զինղեկի գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները

1) հանրակրթական ուսումնական հաստատության զինղեկի պաշտոնն զբաղեցնողը պետք է իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին և կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝

ա. «Կրթության մասին», «Հանրակրթության մասին»,«Զինապարտության մասին», «Զենքի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Կրթության պետական տեսչության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

անձանց կրթության մասին», Հայաստանի Հանրապետության օրենքները, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը,

բ. ՆԶՊ առարկայի չափորոշչի և ծրագրերի պահանջները, իր պաշտոնային պարտականություններին վերաբերող՝ նախարարության համապատասխան նորմատիվ ակտերը, իրավական այլ փաստաթղթեր,

գ. մանկավարժության տեսության և մեթոդիկայի, հոգեբանության, առաջին բուժօգնության օգնության հիմունքները,

դ. աշխատանքի անվտանգության, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոնները:

Որակավորման պահանջները՝

Հանրակրթական ուսումնական հաստատության զինղեկի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն, սպայական կոչում:

(3-րդ կետը փոփ. 26.04.18 N 525-Ն)

Եզրակացություններ և առաջարկություններ

Ավարտելով սույն աշխատանքը, եկել եմ հետևյալ եզրակացություններին.

Այսպիսով, ժամանակակից զինղեկի մասնագիտական գիտելիքները հիմնաքարն են դառնում ուսուցչի հետագա մանկավարժական վարպետության համար: Հենց դպրոց սոցիալական կառույցում են դրվում ապագա քաղաքացու կյանքի գլխավոր ուղենիշների, արժեքային համակարգի և աշխարհայացքի ձևավորման հիմքերը՝ կարևորենք ժամանակակից ուսուցչի ոչ միայն անձնային և մասնագիտական որակները, այլև ուսուցչի մանկավարժական վարպետությունն ու կուլտուրան, էթիկան ու տակտը:

Այս ամենի ընդհանրացված եզրագիծը դիտվում է մասնագիտական գործունեության յուրահատուկ վարքականոնի մեջ, որը, ելնելով ուսուցչի՝ համապատասխան օրենսդրությամբ ամրագրված պարտականություններից և իրավունքներից, ուրվագծում է հարաբերությունների այն ոլորտը, որը չի կանոնակարգվում իրավական նորմերով, այլ ենթակա է զուտ բարոյական կարգավորման: Ահա թե ինչու , այսօրվա ուսուցիչների առջև դրված որակավորման մի շարք պահանջները ենթադրում են նաև այնպիսի որակների ձևավորում, որոնք հետապնդում են ուսուցչի մանկավարժական կուլտուրայի և վարպետության ամրապնդում՝ հետևյալ սկզբունքների հետևմամբ.

- հարգանք երեխայի իրավունքների ու ազատությունների հանդեպ
- մարդասիրություն,
- հոգատարություն
- օրինապահություն,
- արհեստավարժություն
- պատասխանատվություն
- ժողովրդավարություն,
- համագործակցություն
- համերաշխություն,
- հանդուրժողականություն
- արժանապատվություն,
- արդարություն
- անաչառություն,
- հարգանք կրթական գործընթացի մասնակից կողմերի հանդեպ և այլն: Այս ցանկն իհարկե սպառիչ չէ և կարող է լրացվել նշված սկզբունքներին չհակասող և իրենից բարոյական արժեք ներկայացնող այլ սկզբունքներով ևս: Մանկավարժական վարպետությունը հանդիսանում է մանկավարժական կուլտուրայի կարևորագույն և

ստրուկտուրային բաղադրատարրը: Այն արտահայտվում է հաստատուն հոգեբանամանկավարժական գիտելիքներում, ուսուցչի մանկավարժական տակտում և պահանջներում:

Գրականության ցանկ

1. Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն /ուսումնական ձեռնարկ/ Մանկավարժ 2005, էջ 82
2. Каменев А.И. История подготовки офицерских кадров в СССР. ВПА. -М., 1991.- 261 с.
3. https://www.arlis.am/documentview.aspx?docid=122121